ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ
ՈՐԱԿԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԱԶԳԱՅԻՆ
ԿԵՆՏՐՈՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ

ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ANQA-2021/60

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

22 հոկտեմբերի 2021 թ. N 60

«ԱՐՑԱԽԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՊՈԱԿ-Ի ԻՆՍՏԻՏՈՒՑԻՈՆԱԼ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Ընդհանուր տեղեկություն հաստատության մասին

Հաստատության լրիվ անվանումը՝	«Արցախի պետական համալսարան» ՊՈԱԿ
Գործունեության հասցեն՝	ԱՀ, ք. Ստեփանակերտ, Մխիթար Գոշի փ., 5
Նախորդ հավատարմագրման մասին որոշումը և ժամկետը՝	**չի ունեցել**

«Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամի Հավատարմագրման հանձնաժողովը (այսուհետ՝ Հանձնաժողով), ղեկավարվելով ՀՀ կառավարության 2011 թվականի հունիսի 30-ի N 978–Ն որոշմամբ հաստատված «ՀՀ մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների և դրանց մասնագիտությունների պետական հավատարմագրման» կարգով, «ՀՀ մասնագիտական կրթության հավատարմագրման չափանիշները հաստատելու մասին» 2011 թվականի հունիսի 30-ի N 959–Ն որոշմամբ և «Արցախի Հանրապետության մասնագիտական կրթության հավատարմագրման չափանիշները հաստատելու մասին» ԱՀ կառավարության 2017 թվականի դեկտեմբերի 5-ի N 235–Ն որոշմամբ, «Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամի (այսուհետ՝ ՈԱԱԿ) հավատարմագրման հանձնաժողովի ձևավորման և գործունեության ընթացակարգով և «Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամի փորձագիտական խմբի ձևավորման կարգով, 2021 թվականի հոկտեմբերի 22-ին Հավատարմագրման Հանձնաժողովի նիստում քննարկեց «Արցախի պետական համալսարան» ՊՈԱԿ-ի (այսուհետ՝ ԱրՊՀ, Համալսարան, բուհ) ինստիտուցիոնալ կարողությունների հավատարմագրման հարցը:

Հավատարմագրման գործընթացի հիմնական փուլերն իրականացվել են հետևյալ ժամկետներում.

դիմում-հայտի ներկայացում՝	16 հոկտեմբերի 2019թ.
ինքնավերլուծության ներկայացում՝	30 դեկտեմբերի 2019թ.
փորձագիտական այցի իրականացում՝	09-12 մարտի 2021թ.
փորձագիտական զեկույցի ներկայացում՝	22 հունիսի 2021թ.
թերությունների վերացման ծրագրի ներկայացում՝	9 օգոստոսի 2021թ.

«Արցախի պետական համալսարան» ՊՈԱԿ-ի ինստիտուցիոնալ կարողությունների փորձաքննությունն իրականացրել է «Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամի փորձագիտական խմբի ձևավորման կարգ»-ի պահանջներին համապատասխան ձևավորված անկախ փորձագետների խումբը: Գնահատումը կատարվել է ՀՀ կառավարության 2011 թվականի հունիսի 30-ի N 959–Ն որոշմամբ հաստատված ինստիտուցիոնալ հավատարմագրման 10 չափանիշներով:

Ինստիտուցիոնալ հավատարմագրման 10 չափանիշներից **«Հետազոտություն և զարգացում», «Արտաքին կապեր և միջազգայնացում»** չափանիշները գնահատվել են անբավարար:

Հանձնաժողովը, ուսումնասիրելով ԱՊՀ-ի կողմից ներկայացված ինքնավերլուծությունը, փորձագիտական զեկույցը, զեկույցի նախնական տարբերակի վերաբերյալ բուհի դիտողություններն ու առաջարկությունները, զեկույցում նշված թերությունների վերացման գործողությունների ծրագիրը, լսելով փորձագիտական գնահատման վերաբերյալ Հանձնաժողովի նախագահի կողմից ընտրված երեք անդամների եզրակացությունները, որոնք ձևավորվել են փորձագիտական խմբի անդամների և ԱրՊՀ-ի ներկայացուցիչների հետ հանդիպումների արդյունքում, ինչպես նաև հանձնաժողովի անդամների դիտարկումներն ու առաջարկությունները, ամրագրեց հետևյալը.

1. ***Համալսարանը հիմնականում ապահովում է որակավորումների արժանահավատ շնորհում***

Մասնագիտության կրթական ծրագրերն (ՄԿԾ) ընդհանուր առմամբ համապատասխանում են ԱրՊՀ-ի առաքելությանը: ՄԿԾ-երը կազմված են վերջնարդյունքահեն սկզբունքով: Իրականացվել է կրթական ծրագրերի վերջնարդյունքների և ՈԱՇ-ի բնութագրիչների քարտեզագրում: ՄԿԾ-ների մշակման և բարելավման համար հիմք են հանդիսացել համեմատական վերլուծությունները, որոնք կատարվել են ինչպես ՀՀ բուհերի, այնպես էլ արտասահմանյան որոշ հաստատությունների հետ:

Առկա է դասավանդման և ուսումնառության մեթոդների ընտրության քաղաքականություն: Գործում են ՄԿԾ-երի մշտադիտարկման որոշակի մեխանիզմներ, սակայն կարիք կա ակտիվացնել մշտադիտարկման և վերլուծության գործընթացները:

ԱրՊՀ-ն ապահովված է անհրաժեշտ մասնագիտական որակներ ունեցող պրոֆեսորադասախոսական կազմով, որում ներգրավված են նաև ոլորտի պրակտիկ ներկայացուցիչներ և գործատուներ: Սահմանված է ՊԴ կազմի ընտրության որոշակի քաղաքականություն, ներդրված է դասախոսների որակավորման բարձրացման կրթական ծրագիր՝ կրեդիտային հիմքով: ՊԴ կազմը պատրաստակամ է տարբեր փորձարկումներ, բարելավումներ, փոփոխություններ իրականացնելու համար:

ՄԿԾ-ներն արդյունավետ իրականացնելու համար ԱրՊՀ-ում առկա է համապատասխան ռեսուրսային բազա և ուսումնական միջավայր, որը պարբերաբար համալրվում և բարելավվում է:

ՄԿԾ-ների բարեփոխումների հաջող մեկնարկը, առավել պրակտիկ ուղղվածությամբ կրթական ծրագրերը, դասախոսական կազմի կարողությունների անընդհատ բարելավմանը միտված

քաղաքականությունը և կրթական միջավայրի վերազինման հնարավորությունները հիմք են ծառայում որակավորումների արժանահավատ շնորհման համար:

Բուհը հիմնականում ապահովում է որակավորումների արժանահավատ շնորհում, առկա են թերացումներ, որոնք բարելավման ծրագրի իրականացման դեպքում կարող են շտկվել:

2. Կառավարման և որակի ապահովման համակարգերը հիմնականում աջակցում են որակավորումների շնորհման արժանահավատության բարելավմանը

ԱրՊՀ-ում կարևորվում է ռազմավարական կառավարումը բոլոր մակարդակներում:
ԱրՊՀ զարգացման ռազմավարական ծրագրում սահմանված են հստակ նպատակներ և դրանց հասնելու ուղիներ՝ քանակական և որակական ցուցիչներով: Այնումանայնիվ, բուհի տարեկան հաշվետվությունները, որոնք ներկայացնում են բուհի հաջողություններն ու մարտահրավերները, չեն կատարվում ըստ սահմանված ցուցիչների:
ՌԾ-ի մշակումից հետո իրականացվել են մի շարք կառուցվածքային փոփոխություններ: Սակայն դեռևս չկան դրանց գործունեության արդյունավետության գնահատականներ: Կարևոր է, որ բուհը գիտակցում և տեսնում է իր թույլ կողմերը: Ղեկավարության կողմից արդեն իսկ որոշակի քայլեր են կատարվում ակտիվացնելու համագործակցությունը արտաքին շահակիցների հետ և ապահովելու ուսանողների ներգրավվածությունը: կարևորվում է որակի ապահովման համակարգի զարգացումը և որակի մշակույթի ձևավորումը:

Թեև կառավարման համակարգում առկա են խնդիրներ կապված արտաքին շահակիցների ներգրավման, կոլեգիալ կառավարման և ֆինանսական կառավարման հետ, այնուամենայնիվ Համալսարանում առկա է կուռ կամք դիմակայելու և իրականացնելու այն առաքելությունը, որը հայտարարագրել է:

Կառավարումն ու որակի ապահովման համակարգերը ձևավորման փուլում են, սակայն առկա են զարգացման միտումներ և կառավարումը միտված է որակի բարելավմանը, որակավորումների արժանահավատ շնորհմանը:

3. Միջազգայնացումն ու հետազոտական/ստեղծագործական գործունեությունը զարգացման միտումներ ունեն:

ԱրՊՀ-ն ջանքեր է գործադրում գիտահետազոտական ուղղության զարգացման համար: Թեև հետազոտությունը պաշտոնապես առաջնահերթություն է համարվում ռազմավարական ծրագրում, այն ԱրՊՀ գործունեության ամենաքիչ զարգացած ուղղություններից է:
բացակայում են այս ուղղությամբ պլանավորված քաղաքականությունը, հետազոտական գործունեության միջնաժամկետ և կարճաժամկետ պլանավորումները, դեռևս անբավարար է ուսումնական գործընթացի և հետազոտական բաղադրիչի փոխկապակցվածությունը:
Առկա է արտաքին կապերի հաստատումը խրախուսող քաղաքականություն: ԱրՊՀ-ն շարունակաբար զարգացնում է իր արտաքին կապերը՝ մեծացնելով համագործակցության շրջանակը ՀՀ բուհերի, տեղական կազմակերպությունների, դպրոցների հետ:

Լինելով չճանաչված պետության բուհ, Համալսարանի ղեկավարությունը գիտակցում է միջազգայնացման կարևորությունը և քայլեր է ձեռնարկում ակադեմիական մեկուսացվածությունը հաղթահարելու և միջազգային ասպարեզ դուրս գալու ուղղությամբ: Համալսարանը նախ զարգացնում է համագործակցությունը չճանաչված այլ պետությունների հաստատությունների հետ:

Համալսարանը պլանավորել է ներքին միջազգայնացմամբ /միջազգայնացում տանը/ և տարբեր բուհերի հետ համագործակցությամբ ընդլայնել միջազգային ծրագրերում իր մասնակցությունը, ինչը կնպաստի նաև բուհի հետազոտությունների ընդլայնմանը:
Միջազգայնացումն ու հետազոտական/ստեղծագործական գործունեությունը զարգացման միտումներ ունեն և աջակցում են որակավորումների արժանահավատ շնորհմանը:

4. Առկա են թերացումներ, որոնք առանցքային ազդեցություն չունեն որակավորման արժանահավատ շնորհման տեսանկյունից, ստեղծված են հիմքեր բարելավումների համար:
5. Թեև ոչ բոլոր խորհրդավտություններն են լիարժեք ընդգրկվել բարելավման պլանում, սակայն պլանավորված աշխատանքներն իրականացման դեպքում կնպաստեն որակավորումների արժանահավատ շնորհման բարձրացմանը:

Ելնելով վերը նշվածից, Հավատարմագրման Հանձնաժողովը բաց քվեարկության արդյունքում

ՈՐՈՇԵՑ

1. **«Արցախի պետական համալսարան» ՊՈԱԿ-ին** շնորհել ինստիտուցիոնալ **հավատարմագրում 4 /չորս/ տարի ժամկետով:**
2. Հավատարմագրում շնորհելու որոշման հրապարակումից հետո՝ երկամսյա ժամկետում ՈԱԱԿ-ին ներկայացնել փորձագիտական զեկույցում նշված թերությունների վերացման վերանայված ծրագիր և համապատասխան ժամանակացույց՝ հաշվի առնելով **«Հետազոտություն և զարգացում», «Արտաքին կապեր և միջազգայնացում»** ոլորտներում առկա խնդիրներին առաջնահերթ լուծում տալու անհրաժեշտությունը:

3. Հատուկ ուշադրություն դարձնել.
   - ԱրՊՀ-ի 2019-2023 Ռազմավարական ծրագրի գիտահետազոտական գործունեությանը առնչվող խնդիրների և քայլերի վերանայմանը՝ դարձնելով դրանք ավելի իրատեսական,
   - ‹‹Միջազգայնացում տեղում›› քաղաքականության մշակմանը և իրագործմանը, որը ենթադրում է միջազգային փորձի ուսումնասիրություն տարբեր ոլորտներում (կառավարում, կրթական ծրագրեր և այլն) և տեղայանցում,
   - տվյալների հավաքագրման, ինչպես նաև հավաքագրված արդյունքների մշակման և վավերացման մեխանիզմների բազմազանեցմանը,
   - ՄՈՒՀ-ի ռազմավարական կառավարման մեջ արտաքին շահակիցների ներգրավմանը,
   - կոլեգիալ կառավարմանը և ֆինանսական կառավարմանը, ֆինանսական միջինժամկետ պլանի կազմմանը,
   - բուհի ինքնավարության ընդլայնմանը,
   - վելուծությունների, հստակ քանակական և որակական տվյալների վրա հիմնված որոշումների կայացմանը և հաշվետվությունների իրականացմանը,
   - արդյունքահեն կառավարման համակարգի բարելավմանը, բարելավման գործընթացներին արտաքին շահակիցների ներգրավմանը,
   - կրթական ծրագրերի մշակման և վերանայման, ինչպես նաև որակի ապահովման գործընթացներում ներքին և արտաքին շահակիցների ներգրավմանը,

- բոլոր գործընթացներում ՊԻԳԲ շրջափուլի կիրառմանը
- հետազոտական գերակայությունների վերհանմանը, ռազմավարության ձևավորմանը,
- ուսումնառության և հետազոտության կապի ամրապնդմանը:

4. Կազմակերպել ԱրՊՀ-ում իրականացվող մասնագիտության կրթական ծրագրերի ներքին աուդիտ արտաքին փորձագետների ներգրավմամբ:
5. «ՀՀ մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների և դրանց մասնագիտությունների պետական հավատարմագրման» կարգի 12-րդ կետի պահանջներին համապատասխան 2 տարի մեկ անգամ ՈԱԱԿ-ին գրավոր զեկույց ներկայացնել իրականացված գործողությունների արդյունքների վերաբերյալ՝ գնահատելով ակադեմիայի գործունեության բարելավումը, նորարարություններն ու ձեռքբերումները:
6. Հանձնարարել ՈԱԱԿ-ին պարտադիր մշտադիտարկման ենթարկել ԱրՊՀ-ի գործունեության արդյունավետությունն՝ ըստ առաջընթացի առանցքային ցուցիչների:
7. Որոշումն ուժի մեջ է մտնում հավատարմագրման պետական գրանցամատյանում գրանցվելու պահից:

Հավատարմագրման Հանձնաժողովի նախագահ **Ա. Սաղյան**

2021 թ. հոկտեմբերի 22

ք.Երևան